ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆրանսիայի Հանրապետություն (քաղաք Փարիզ)

2019 թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 5-ը ներառյալ գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Սուսաննա Սաֆարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Ֆրանսիայի Հանրապետություն քաղաք Փարիզ 2019 թվականի սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 5-ը ներառյալ:

4. **Հրավիրող կողմը՝**

IFTM TOP RESA 2019 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսի կազմակերպիչական թիմ:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Ցուցահանդեսին Կոմիտեի նախագահի այցի հիմնական նպատակն էր տեղում գնահատել տվյալ ցուցահանդեսին պետական աջակցությամբ մասնակցության ապահովման անհրաժեշտությունն ու արդյունավետությունը, համակարգել տաղավարի ճիշտ կազմակերպումն ու զբոսաշրջային ընկերությունների հավասար գործունեությունը:

6. Քննարկված թեմաները

Քննարկումներ են տեղի ունեցել մի շարք երկրների ներկայացուցիչների հետ հետագա հնարավոր փոխհամագործակցության եզրեր գտնելու նպատակով: Քննարկման հիմնական թեմաները առընչվում էին համագործակցային ճանապարհով զբոսաշրջության զարգացմանն ու Հայաստանի ճանաչելիության բարձրացմանը:

7. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը

Միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ մի շարք հայտնի լրատվամիջոցների ներկայացուցիչների և բլոգերների հետ, քննարկվել են վերջիններիս մասնակցությամբ դեպի Հայաստան ճանաչողական այցերի կազմակերպման միջոցով Հայաստանի, որպես զբոսաշրջային ուղղության ճանաչելիության բարձրացման ձևաչափերը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Վերոնշյալ հանդիպումների արդյունքում ձեռք են բերվել պայմանվորվածություններ 2020 թվականին կազմակերպել մի շարք հայտնի լրատվական հանրահայտ ընկերությունների և մի քանի 100 հազարից ավել հետևորդ ունեցող բլոգերների այցեր դեպի Հայաստան:

Այցի շրջանակներում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի շրջանակներում առաջարկներ չեն եղել հետևաբար ժամկետներ և պատասխանատուներ չկան:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

10.10.2019